ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60,էլ հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA#

#

02.11.2016թ
305-ի 5

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարար
պարոն Աշոտ Մանուկյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մանուկյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների երկրորդ ծրագրի իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի առաջին հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2016թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ Հանրապետական երկրաբանական ֆոնդում առկա տեղեկատվական բազան քանի՞ տոկոսով է թվայնացվել:
2. 2016թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ Հանրապետական երկրաբանական ֆոնդի քանի՞ աշխատակիցների հետ է տարվել ուսումնական աշխատանքներ: Խնդրում ենք տրամադրել աշխատակիցների ցանկը:
3. Ե՞րբ և որտե՞ղ է կազմակերպվել ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկման արշավը: Քանի՞ բուկլետ է տպագրվել և բաժանվել մինչ օրս:
4. Ի՞նչ աշխատանքներ են տարվում պարտավորությամբ նախատեսված կայքի գործարկման ուղղությամբ: Ե՞րբ պատրաստ կլինի այն և ե՞րբ է նախատեսված իրականացնել կայքի շնորհանդեսը:
5. Պարտավորության ամբողջական իրականացման համար և դոնոր կազմակերպությունների կողմից, և պետական միջոցներից որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացված: Որքա՞նն է մինչ 2016թ. հոկտեմբերի 31-ը ծախսվել:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան